


ERM0622



# ԱՐԱՋԻՆ ԸՆԹԵՐԱՑՄԱՆ

ՊԱՏԿԵՐԱՀԱՐԴ

ՅՈՒՆԵՏ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

معارف نظارت جلیله سنك رخصتیله طبع اولمشدر



Կ. Պ Օ Լ Ի Ս  
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1892





Ա. Ո Ա. Շ Ա Կ Ե Ր Տ Ս Ս

իմ փոքրիկ տղայքս , ահա ձեզինոր դրբոյկ մը :  
Այլենարանը լմնցուցիք : Հիմա քիչ շատ կարդալ  
ու գրել գիտեք : Ո՞րչափ դոհ և ուրախ էք , այն-  
պէս չէ . ինչու որ աշխատեցաք , վարժապետին  
դասերն ուշադիր մոտիկ ըրեք , հնազանդ ու կա-  
նոնապահ եղաք : Պէտք է որ ուրեմն ընդունիք  
ձեր վարձքը : Այս նոր դրբոյկը քան ամէն պարզ և  
աւելի պատուական պիտի ըլլայ ձեզի համար եթէ  
հոգ տանիք աւելի ուղիղ , բարձր և յստակ կար-  
դալ և մաքուր դրել :

Բայց բաւակա՞ն է միայն կարդալ ու դրելլը :  
Արդեօք ուրիշ բան պէտք չէ : Անշուշտ պէտք է :  
Այս դրբոյկին մէջ պիտի գտնէք աղւոր զրոյցներ ,  
վէպիկներ , ոտանաւորներ ու պատկերներ : Տա-  
րակոյս չունիմ , որ պիտի սիրէք այս նոր դասա-  
գիրքն և երբ դասատուն դրուածները ձեզի բա-  
ցատրէ , բարոյական դասեր հանէ և հարցումներ  
ընէ այն ժամանակ օդուտ պիտի քաղէք և աւելի  
դոհ պիտի ըլլաք :

Չեր չորս կողմը կը տեսնէք քարեր , ծառեր ,  
բոյսեր , ծաղիկներ , թռչուններ և ուրիշ շատ բա-  
ներ . ի՞նչ են ասոնք : Օգտակա՞ր են թէ վնա-  
սակար : Նոյնպէս ձեզի կը պատուիրեն որ միշտ  
խելօք , բարի , ջանասէք ըլլաք . ինչո՞ւ համար :  
Այդ հարցումներուն կարճ հարեւանցի պատաս-  
խաններ պիտի գտնէք այս դրբոյկին մէջ և չգըտ-  
նուածները ձեր վարժապետին պիտի հարցնէք ու  
պիտի միտ առնէք :



Թող տուեմ այդ մանուկներն ու մի՛ արգիլեմ,  
զի այդպիսեաց է երկնից արժայուքիւնը :



# ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՊԱՏԿԱՐԵԶՄՐԴ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1. Ա. Ա. ՏՈՒԻԱՆ ՈՒ ՄԱՆԿԻՆԸ

Աստուած բարի է. մեր հայրն է :

Նա ստեղծեց աշխարհը :

Երկիրն ու երկինքն իր գործերն են :

Աստուած ամեն տեղ է .

Ամեն բան կը տեսնե , գիտե , ամենակարող է :

Աստուած կը սիրե բարի տղայքը :

Ես կ'ուզեմ բարի ըլլալ :

Ես կը սիրեմ իմ ծնողքն :

— Բարի . Արի . Առի . Տարի . Հայ . Հայր .

Այր . Մայր . Եղ . Տեղ . Ցեղ :

## 2. ԲԱՐԻ ՏՎՈՒՆ

Ես առաւօտ կանուխ ելայ . Հագուեցայ , երեսս լուացի .



Հայելի

Ազօթքս ըրի , խաչանեցի .

Ազօթեցի , որ Աստած պահէ պահպանէ ծնողքս .



Սպունգ

Ապա նախաճաշիկս ըրի .

Առի գիրքս եւ մայրիկը ըսի .



Սահմ

— Սիրելի մայրիկ , ես գպրոց կ'երթամ :


Մայրիկն ըսաւ , —

Ապրիս զաւակս , Աստուած հետդ :

— Առաւօտ .

Կանուխ .

Հագնիլ .



## 3. ԳՊՐՈՑ

Այս գպրոցը շատ աղւոր է :

Ուսմունք սորվելու տեղ է :

Տղայք նստած են կարգաւ :  
Աշակերտներ են . վարժապետին  
մահիկ կ'ընեն :



Աշակերտները կը կարգան ու կը  
դրեն :

Ես ալ հիմա աշակերտ եմ :

Կոչում կուտառ, գրել, հայութ սորզել :

Աղ . Խաղ . Թաղ . Ճաշ . Ճաշիկ . Նախաճաշիկ .  
Դրալ-բոց . Դը-պիր . Կարգ . Վարժ . Պետ :

#### 4. ԱՐԵԿ

Ես արեւին հետ կ'ելնեմ .

Ի՞նչպէս կը փայլի արեւը .

Առաւօտուն կը ծագի .

Երեկոյին մարը կը մտնէ .

Կրակէ գունտի պէս կ'երեւի :

Երբոր՝ մարը մտնէ աստղերը կ'ելնեն.  
 Լուսին ալ կլոր է, մարդու գեմք ունի.  
 Լուսնին լոյսը անուշ է .  
**Արեգակը ցերեկուան կանթեղ է :**  
 Լուսինը բիշերուան լողուբը է :  
 — Արեւ . Բարեւ . Հետ . Նետ . Կը-լոր . Բո-լոր .



### Յ . Ա Ր Ե Ւ

Արեւ , արեւ , դուրս ելիր ,  
 Քեզ պիտ' ըսենք , բարի եկիր ,  
 Քու քուրիկդ լուսինկան ,  
 Բերաւ չամիչ մէկ աման ,  
 Ամպը եկաւ մուժ բերաւ  
 Չամիչը աչքերէս կորաւ ,  
 Բաց երեսդ արեգակ .  
 Ափ մը չամիչ քեզ կը տանք ...  
 Օ՛և , արեւին խաբեցինք  
 Ամպի տակէն հանեցենք .

Ա . ԲԱՀՈԹՐԵԱՆՑ



### Յ . Ե Ր Կ Ի Ն

Երկինքը կապօյտ է .  
 Երբ անձրեւ գոյ կը միջնայ .

Անձրեւը կաթիլ կաթիլ կը վազէ .  
Երբեմն երկինքը կ'որոտայ ,  
Կայծակներ ասդիս անդին կը վազվղէն .  
Ի՞նչու հուշը :

— Կապոյտ . Պուտ . Կայծակ . Կայծ . Կայծքար .

### 7. ՋՈՒԱՐ

Ջուրը շատ օգտակար է .  
Ջարաւս կ'անցնէ .  
Ջուրը գետէն կ'ելնէ .  
Ջուր կը վազի երկինքէն .  
Երինին վուշ լուրն անյրեն է :  
— Օդ-տակար . Օ-ջուտ . Գետ . Գէտ .

### 8. ԱՆՁՐԵԿ

Անձրեւ , անձրեւ ցած արի ,  
Բուսցուր ցորեն ու գարի ,  
Բուսցուր ճաղիկ կանաչ խոտ ,  
Աւլէ փոշի , մաքրէ օդ :  
Անձրեւ , անձրեւ ցած արի ,  
Գուլդ ամենքիս բարի :

Ա . Բ .

## Գ. ՃԱՇ

Կէս օրին ազատ եղայ . տուն գացի . սեղանը պատրաստ էր :

Սպիտակ սփռոցին վրայ , իմ առջեւս կար պնակ մը , դրգալ մը . բաժակ մը և հաց :

Սեղան

Երբոք սեղան նստայ  
խաչ հանեցի , հայ գը ըսի :

Հաւկիր

Թանս կերայ , քիչ մը  
տաք էր . մայրիկը տուաւ  
ինձ խաշած հաւկիթ  
մը . ապա կտոր մը միս :

Խատ

ախորժակով  
կերայ . ինչու որ լաւ  
աշխատեր էի և դասս

Խնձոր

լաւ սորվեր էի :

Վերջը մայրիկա խնձոր մը ստը,  
կեց և ինձի տուաւ որ ուտեմ , շատ  
համով էր :

— Ազատ . զատ . ազա-տիլ . զատել . ա-նա-զատ .

## Ա. Ռ. Ա. Ծ

Նաւիդ դէկ ,

Մարդուն խելք

Ոսկին աղայ ,

Երկար ծառայ :

## 40. ՀԱՅ

Երբոր անօթի եմ հացը շաքարի  
պէս կ'ուտեմ:

Կուղեմնաեւ գիտնալ թէ հացը  
ի՞նչպէս կը շինեն:

Ահա կը տեսնեմ հացն որ ունի  
պինդ կեղեւ և միջուկ:

Ծակուտ ու կակուղ է սպունգի  
պէս:

Հացը կը շինուի ալիւրէ . ալիւրը  
ցորենէն կ'ելնէ երբոր աղօրէպանը  
ցորենը կ'աղայ: Զրով ու քիչ մ'ա-  
ղով կ'շաղեն ալիւրը, խմոր կընեն: Ապա  
կը կնտեն, պնակիւտի մէջ կը դնեն  
և կը թողուն որ խաշը (մայա) հասնի:  
Վերջէն փուռը կը դրկեն եփելու  
համար:

Ճառ ճառ և ճառ և ճառ և ճառ :

— Շաք-ար . քար . շահ . ծակ-ուտ . կեղեւ .

## ՀԱՅ


Փոքրիկ կարաս ունիմ սպիտակ

Մէջի զուրը երկու տեսակ:

Այս ի՞նչ է:

## 44. ԽԱՂ

Երբոր շատ աշխատիմ դպրոցը  
շատ եռանգով կը խաղամ։



Բարան



Երշանակ դարձնել

Ահա երկու ա-  
շակերտներ որ  
բաբանի մը վը-  
րայ կ'օրուին։

Ուրիշ մը շըր-  
ջանակին հետ կը  
խաղայ։

Երեք աշակերտ-  
ներնալ հանգիստ  
նստած սանդրինչ  
կը խաղան։

Փոքրիկ Օհա-  
նը շը կրնար վա-

զել. քանիզի դեռ շատ պղտիկ է, անոր  
համար իր փայտէ ձին կը քաշէ։

— Աշխատիլ. աշխատ. շըր-ջան-ակ. զջան.

## 45. ՀՈԳԱԾԵՐ ԱՇԱԿԵՐՏԸ

Հոգասէր է այն աշակերտն որ  
մաքուր կը պահէ իր գիրքն ու տետ-  
րակները։

ԵՐԲ ԳԻՐ ԳՐԵ ԻՐ ՄԱՏԵՐԸ ՀՔ ՍԵւ-  
ԳՐՆԵՐ և իր հագուստը  
ու թուղթը չաղտո-  
տեր :



Կաղամար



ԶԱՅԵՒԹԻ



ՊԱՍԿ

Կաղամարը մէկդի կը  
դընէ և խուփը կը գո-  
ցէ դասը պատրաստե-  
լէն ետեւ :

ԵՐԲՈՐ մատիսը կըտ-  
րէ կը նայի որ մատը չք  
կտրէ :

ԲՆԱԿ չխաղար զմե-  
լիին հետ :

ՀԱԳԱՄԵՐ աշակերտը  
ջանասէր ալ կըլլայ . ա-

մեն բան կարգով ու կանոնով կընէ  
և վերջը գովեստ ու մրցանակ կ'ըն-  
դունի :

— Հոգ-ա-սէր . հոգ . սէր . տետ-ըսկ . տետր .

### Ա. Ռ. Ա. Ծ

Ի՞նչ որ ցանես , այն կը հնձես ,  
Ի՞նչ որ ընես այն կը գտնես :



## 43 ՄԱՐԴ

Մարդն ունի երկու աչք տեսնելու համար :



Գլուխ



Բազուկներ



Երկու ձեռք



Ոտք

Վրայ ամեն արարած զգայարանք ունի :

— Համար . ամար . ամառ . յամառ . յամայր .

Երկու ականջ լսելու համար :

Լեզու մը խօսելու համար :

Ուրեմն պարտաւորէ աւելի դիտելու մտիկ ընելքան թէ շատխօսիլ :

Մարդն ունի նաև քիթ որ հոտ , շունչ առնու :

Երկու բազուկ , երկու ձեռք եւ տասը մատ ունի , որպէս զի աշխատի ու տատի :

Ոնի նաև երկու սլրունք և ոտք՝ որ տեղէ տեղ շարժի :

Եթէ զգայարանք չունենար պիտի կրնա՞ր զգալ , խորհել : Երկրիս

Փետուր գրչի համար գրչակալ  
պէտք չէ :

Երկաթէ գրչին համար գրչակալ  
կը գործածեն : Աւելի շատ կը դի-  
մանայ :

Գրչակալը կրնայ ըլլալ փայտէ ,  
կիտոսկրէ , գաղտակուրէ , թիթեղէ :  
— Բըն-ա-կան . բըն-ու-թիւն . բուն . բըն-իկ . բըն-ակ :

---

### 47. Դ Ա Ս

Երբոր երեկոյին գպրոցէն կ'ար-  
ձակուիմ՝ ճամբան խելօք կը քալէի  
և շիտակ տուն կ'երթամ : Երբոր  
տեսնեմ ազգական , բարեկամ և մեր  
տան ծանօթ մարդ և վարժապետու՝  
գլխարկս կը հանեմու բարե կուտամ:

Ընթրիքս ընելէն ետեւ քիչ մը  
կը նստիմ ծնողքիս քով , և ապա կը  
քաշուիմ սենեակս և միւս օրուան  
դասերս կը սերտեմ : Այսպէս մէկ  
երկու ժամկ'աշխատիմ և վերջը կ'եր-  
թամ անկողինս . Տէրունական աղօթ .  
քը կ'ըսեմ և կը պառկիմ , որ առա-  
ւոտ կանուխ ելնելով գպրոց երթամ :

— Քալ-եմ . քայլ . գայլ .



### 18. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՎՈՐՔ

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ  
եղիցի անուն քո. Եկեսցէ արքայու-  
թիւն քո. Եղիցի կամք քո, որպէս  
յերկինս և յերկրի. Զհաց մեր հա-  
նապազորդ տուր մեզ այսօր. Թող  
մեզ զպարտիս մեր, որպէս և մեք

թողումք մերոց պարտապանաց . եւ  
մի տանիր զմեզ ի փորձութիւն , այլ  
փրկեա զմեզ ի չարէ , զի քո է ար-  
քայութիւն և զօրութիւն և փառք  
յաւիտեանս ամէն :

Անուն հօր և որդւոյ և հոգւոյն  
սրբոյ ամէն :

## 19. Ա Յ Տ Ո Ւ Ա Մ

Ո՞վ խըատեց մրջիւնին  
Գետինը ծակել ,  
Բոլոր ամառ մեծ ջանքով  
Պաշար հաւաքել :

Որմէ՞ ուսաւ , ինձ լսէ՛ք .  
Փռքըիկ թուշունը  
Յարդէ , ճիւղէ և բրդէ ,  
Հիւսելիր բոյնը :

Ո՞վ խըատեց մեղուին ,  
Հրաշալի բանիւ ,  
Ծաղկանց մեղր քաղել ,  
Անուշ և աղնիւ :

Աստուած է այդ վարժապետ,  
Բարի անսահման :  
Զանացէ՞ք միշտ կատարել  
Կորա սուրբ հրաման :

Մ Ա Ս Կ Բ.

4. ԾՆՈՂԱՍՔԻ ՏՀԱՆ

Արեւը նոր ելաւ . առաւօտուն  
կը փայլի ցողը ծաղիկներուն վրայ :  
Փոքրիկ Վահեն ոտքի վրայ է ար-  
դէն : Իր ձեռքն ունի ցնցուղ մը :



Հոգասէր Տղան

ինչո՞ւ այսպէս կա-  
նուխ կ'աշխատի . —  
ինչու որ իր հայրն՝  
որ պարտիզպան է,  
չկրնար աշխատիլ .  
ոտքը ցաւցուց հո-  
ղը հերկելու ատեն:

Վահեն իր հօրը գործը կ'ընէ ,

դպրոց շգացած ածուները կը ջրէ :

Իր հայրը նստած է  
քարի մը վրայ, դորո-  
վալի աչքով կը նայի  
իր աշխատասեր զա-  
ւակին :



Վահեն շատ գոհ է,

ՑԵՍՈՒՂ

Խըս ու է բործով շան հարայ է  
մէրը հօրը համար :

ԳԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ . — Փայլիլ. Փոքր-  
փոքրիկ Պարտէզզ-պան . Ծաղկիկ-ներ . ևայլն :

ԳԻՏԵԼԻՒՔ . — Արեւն ինչպէս կ'ելնէ . ի՞նչ է ցող .  
Ածու . Հատոց . Բահ . Տրմուխ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Աէր որդիական . պարտաւորութիւն :

## 2. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՀՍՏ

Մարտիկին մայրը կտոր մը բլիթ  
տուաւ իրեն : Մարտիկ մոռցաւ ը-  
սելու . — Շնորհակալ եմ, մայրիկ .

Մայրիկը ցաւեցաւ, բլիթն առաւ  
տղուն ձեռքէն եւ կատուն կանչեց :

Կատուիկին տուաւ կտոր մը բլ-  
իթ, փիսիկը շատ գոհ եղաւ, գըգ-

ուեց տանտիկինը , միառ միառ կ'ըներ :  
 — Տե՛ս , ըստ մայրիկը որդիին ,  
 փիսիկը լեզու չունի , բայց իր կեր-  
 պովը շնորհակալ եմ կ'ըսէ :

Վերջը մայրիկը կանչեց շունն եւ  
 բլիթին մնացած կտորն անոր տուաւ :

Շունն սկսաւ պոչն օրել , և շը-  
 նորհապարտ դէմքով անոր ձեռքը  
 լգեց :

Շունն ալ գիտեր իր կերպով չը-  
 նորհակալ լինիլ :

Միւս կողմէն Մարտիկ երեսը կա-  
 խած կը նայէր որ բլիթը մէջ կը  
 խաղայ եւ մտքով կ'ըսէր ,

Մայրիկը իրաւունք ունի . Բայ-  
 ցւունի ու բարեւ ընդունելու այս որ ուժեւե չնորհուու լինել :

ՔԵՐ. ՎԱՐԺ . — Տուաւ-տալ . Մայր-մայրիկ . Իմ-  
 ԶԵՐ-ՁԵՐՔՅՆ :

ԳԵՏԵԼԻՔ . — Կատու . Զորքոտանի . եւայլն .  
 Տուն . Տնակ . Ապարան :

ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Քաղաքալարութիւն եւ երախ-  
 տագիտութիւն :

3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ



ՌԵՎ



ԱՅ



ԵԸ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ կան որ ըստու են,  
մարդու հետ կը բնակին, անոր կը  
ծառացեն եւ սնունգ կուտան.



ՎԱԳՐ



Առինձ

Կան կենդանիներ ալ որ չուեն են,  
լեռներն ու անտառները կը բնակին:

## 4. ԷՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ



Կառք բաւող ձի

Զին շատ օգտակար է :  
Կար կենդանի է :  
Զին կը կրէ  
մեր բեռերը . կը  
տանի մեզ տեղէ  
տեղ : Շատ անգամ արօրը կը քաշէ ,  
կովուն պէս , եւ կառքի կը լծուի :



Շուն



Կատու

Կովին , ոչխարն ու այծը մեզի կու-  
տան կաթ : Կաթէն ի՞նչ կը շինուի :  
Շունը մարդուն բարեկամն է .  
տունը կը պահէ , կը պահպանէ : Հո-  
վիւին ոչխարներուն վրայ կը հսկէ  
որ գայլը չ'առնէ չը տանի :  
Կատուն մուկ կը բռնէ :

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Բնտանի կենդանի . Լեռն . իր .  
Շինել , Շինուիլ . Շէն . Անշէն եւայլն :  
ԳԻՏԵԼԻՔ. — Ո՞ւր կը բնակին մարդիկ ...

ԲԱՐՈՑԱԿԱՆ . — Բնտանի կենդանիներու վեսա  
չընել . ինչո՞ւ :

— Յօն

### 5. Պ Ա Ր Տ

Երեք մանկիկներ՝ ուրախ ու զուարժ ,  
Կ'երթային դպրոց խօսելով հանդարտ .  
— Թէ լաւ աշխատիմ , կ'ըսէր մին միւսին ,  
Հօրս խոստացածն՝ կ'ընդունիմ ոսկին :  
Երկրորդը յարեց , Թէ ես աշխատիմ ,  
Իմ սիրուն մօրմէս , մի համբոյր կ'առնեմ .  
— Իսկ ես ի՞նչ ընեմ , հառաջեց վերջին ,  
Հայր ու մայր չունիմ : որբին՝ ի՞նչ բաժին :  
Բայց եւ այնպէս ես , միշտ պարտ կատարեմ ,  
Պարտ կատարելով՝ վարձք հետը կ'առնեմ :

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Յուշիկ յուշիկ կը քալէ  
Գիշեր ցորեկ , փոյթը չէ ,  
Թէ եւ նոյն տեղ միշտ ման գայ  
Բայց իւր գլուխ ո՛չ դառնայ .  
Ո՛չ քալելէն կը յոգնի ,  
Ոչ կերակրոյ պէտք ունի ,  
Բայց ինքն է որ քեզ կ'ըսէ ,  
Ե՛լ , կեր , աշխատէ՛ եւ քնէ՛ :

## 8. ԵՐԿՈՒ ՔՈՅՑՐԵՐ



Մայրիկն ըստ Մարթային .

—Աղջիկս, նստի՛ր և սա կողովին  
մէջ գտնուած ոլոռներն սարկե՛ :

Մարթա գործի սկսաւ. բայց այն-

քան մեծ կ'երեւէր իրեն կողովն , որ  
կարծէր թէ չպիտի լմննայ :

Իր բոյրը Երանիկ  
շուտ մը քովը վազեց և  
ըսաւ .

— Քուրիկ , թո՛ղ որ  
քեզի քիչ մ'օգնեմ .  
Քուրիկը սկսաւ շուտ  
շուտ ստըկել . Իր փոք-  
րիկ մատերովը կը բա-  
նար փոճոկները , կը  
հանէր ոլոռներն և մեծ  
պնակի մը մէջ կը նե-  
տէր : Երկու քոյրերու  
մէջ մրցում մ'ընկաւ ի-  
րարմէ աւելի շատ ընե-  
լու : Երկուքն ալ զար-  
մացան երբ յանկարծ  
տեսան որ կողովը պարպուեր է : Ուս-  
տիուրախ զուարթ ելան եւ գացին  
միասին խաղալու :



Քուրիկը կ'օգնէ



Ալոռն

Կողովը պարպ-  
ւեր է :

Երբ աշխատուի բաժնուի հաջելի իւ ընէ :

Քեր . ՎԱՐԺ . — Սա . Դա . Նա . . . Դ . Ն . Կայլն :

ԳԻՏԵԼԻՔ . — Աշխատութիւնը երբ բաժնուի չուտ  
կլմնայ . Օրինակ մը :

ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Իրերօդնութիւն :



Արջ



Կապիկ

48. ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Առիւծը կենդանիներուն թագաւորն է : Շատ ուժեղ է . ունի խիսքաշ մը եւ երկայն պոչ :

Աղուէսը հաւերուն թշնամին է . Գայլը ոչխարներուն անգութ ոսոխն է : Գառնուկներ եւ մաքիներ կը յափրշտակէ և անտառը տանելով կը պատառէ , կ'ուտէ :

Արջ տեսա՞ծ ես . Կապիկը խաղաղասէր միմոս մ'է :

ՔԵՐ . ՎԱՐԺ . — Ոյժ , ուժեղ , Բաշ , ինչպէ՞ս բաշ . Անգութ , գթոտ և այլն :

ԳԻՏԵԼԻՔ . — Կենդանիներու տեսակներ . Օղի , ջըրի , ցամաքի և այլն :

ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Յափշտակիչ մարդիկ ատելի , ինչպէս կենդանիները :

### 41. ԳԱՌՆՈՒԻԿ

« Ինչո՞ւ կուլաս , դու գառնուկ , »

— Խիստ ծեծ կերայ ես , մայրիկ :

« Ո՞վ ծեծեց քեզ , իմ գառնուկ . »

— Մէկ ծեր պառաւ ; վատ կնիկ .

« Ինչո՞ւ ծեծեց քեզ գպոնուկ . »

— Ծառի տակն էի , մայրիկ .

« Ո՞ր տեղիդ խփեց , գառնուկ . »

— Ոտիկներիս , իմ մայրիկ .

« Ինչպէս լացիր , դու գառնուկ . »

— Մէ' , մէ' , մէ' , մէ' , իմ մայրիկ :

Ա . Բ .



### 42. ՔԱՂԱՔԱՎԱՐԵՂԻՔ

ԵՐԵՔ ՄՊԱՔՆԵՐ պատի մը տակ նստած կը խաղային :



Պառաւ կին մ'այն կողմէն կ'անցնէր , ծանր ծանր կըքարէր և նոյն պատին կը կռթնէր .



Երեք տղաքները շուտ  
մ'ոտք ելան և մէկդի  
քաշուեցան որ պառաւ  
կինն անարգել ձամբան  
շարունակէ :

Երբ պառաւը մօտեցաւ,  
տղեկներն իրենց գլխարկները  
հանեցին, բարեւ ըսելով :

Եթէ տղայք կ'ուզեն սիրելի լինիլ,  
պարտաւոր են թէ դպրոցը, թէ  
տունը, եւ ամեն տեղ յարգանօք  
շարժիլ եւ վարուիլ մեծերուն առջեւ :

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Երեք. Թուական. Երրորդ Նըս-  
տիմ. ևայլն. Խաղասէր. Արգել. ան-արգել :

ԳԻՏԵԼԻՔ. — Տարիք. Տղայ, պատանեակ, երի-  
տասարդ. արբուն,

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Բաւական չէ կիրթ լինիլ, այլ եւ  
քաղաքավար, պատճառ :

— 48 —

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Կը խօսի մարդ չէ,  
Կը մլաւէ, կատու չէ,  
Ուրիշ կենդանի ալ չէ,  
Հապա մտածէ՝ այդ լոնչ է.

## 13. Լ ՈՒՍ Ն Ա Կ

Լուսնակ կուզեմ ես լուսնիկը ,  
 Պոռար լալով՝ պղտի Լուսիկը ,  
 Ոտքը դետին դաք դաք զարնէր ,  
 Որ խօսքն ընէ իր մայրիկը .  
 — Մի՛ լար , հոգի , էհ , լուռ , մի՛ լար :  
 Մայրիկը կըսէր դողահար : —  
 Եւ ճար ու ճարակ կը փնտուէր ,  
 Որ լուսնակն հուպ առնէ վար :  
 Անդին մամիկն ալ շուարած ,  
 Գլուխն առաւ դուրս դնաց ,  
 Շուկաներ ընկաւ որ դնէ ,  
 Լուսնակներ , որպէս պանիր հաց :  
 Վլվլուկն որ հայրիկն լսեց .  
 « Ի՞նչ կայ հոգ տեղ , ի՞նչ կայ դոչեց ,  
 « Եկ աղջիկ դու , ես տամ ուղածդ »  
 Բոստ նա , եւ անոր ժպտեց :  
 « Ելի՛ր շուտ , սա մօտ լեռն ելի՛ր .  
 « Ինձի հետ շատ շուտ վազիր .  
 « Լուսնակին որ կը մօտենանք ,

«Անոր պոչէն պինդ պինդ բռնի՛ր»  
 Փոքրիկ աղջիկն ուժովը բոլոր,  
 Կը վազվեր ոլոր մոլոր,  
 Խոկ երբ հասան բլրակն ի վեր.  
 — Հայր, այդ լուսնակ հեռի՛ է դեռ.  
 «Աղջիկ դու միշտ, արի՛ քալէ,  
 — Բայց կը հեռամ, ալ հերիք է։  
 «Միթէ հովդ անցաւ աղջիկ.  
 «Զես խօսիր դու ինչ եղեր է։  
 Լոսիկ տրառում, յոդնած կարմրուն,  
 Զայն չը հանեց դարձաւ իտուն,  
 Բայց սրտին խորը ոխ քէն պահեց,  
 Լուսնակին դէմ, որ կար հեռուն։  
 Անկարելն էլլու կէշու կը քնառուն.  
 Այն ժարդէն ու զնորեր են։

## 14. Օ ԳՆԵՆՔ ԻՐԱՐՈՒԻ

Ագարակ մը կար որու մէջէն գետ  
 մը կ'անցնէր։ Այնքան շատ անձրեւ  
 եկեր էր որ գետը յորդեր էր։

Փոքրիկ Օհան, ագարակա-  
պանին որդին, գետին առջեւ  
կը գտնուի : Եւ կանգ կ'առնէ :

Օհան շատ կը վախնայ եւ  
տուն երթալու միջոցը կը փնտուէ :  
Նոյն միջոցին՝ Օհանին մէկ ընկերն  
անկից կ'անցնի : Աւելի  
մեծ եւ ուժեղ էր : Օհա-  
նը կ'առնէ իւր կռնակը  
եւ կ'անցնի դիմացի եզ-  
րը, երբոր գետը կը գոռար :



Հայունասոս ողուց ուրբուն օդնեւ երես է ու ըստ ընկերներուն :  
Քեր . ՎԱՐԺ . — Օհան ի՞նչ անուն է . Գետ .  
գետակ եայլն :

ԳԻՏԵԼԻՔ . — Գետն ի՞նչ է . Աղբիւր . Ծով . ևայլն :  
ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Ամենէ փոքրը մեծին կրնայ օդ-  
տակար լինել : Օրինակ ,

---

— 88 —

---

45. ԱՆՀՆԱԶԱՆԴ ՏՂՈՒՆ ՊԱՏԻԺԲ

Պաղտիկ ամեն օր գալրաց երթալու  
ասեն քարաշէն կամրջէ մը կ'անցնէր :  
Մայրիկն անոր կ'ըսէր միշտ . — Տը-



ղաս , կամրջին որմէն  
վար մի՛ ծռիր , գետին  
մէջ կ'իյնաս .

Բայց Պաղտիկ շատ կը  
փափաքէր պատին վրայէն գետը նա-  
յիլ , և կըսէր . — Կարելի է ջրին մէջ  
ձկները կը տեսնեմ .

Օր մը Պաղտիկ ելաւ քարակոյտի  
մը վրայ , երկնցաւ եւ սկսաւ նայիլ :



Բան մը չտեսաւ , այլ  
ոտքը սահելով՝ գետին  
մէջ ինկաւ :

Քանի մը մարդիկ շուտ  
մը վազեցին և գետէն հանեցին Պաղ-  
տիկը . մարած էր . կիսամեռ էր . ճա-  
կատը քարի մը զարնուելով ծակած էր :

Այսպէս խեղճ Պաղտիկ իր պա-  
տիմը գտաւ և այնուհետեւ միտքը  
դրաւ մօրը պատուէրը պահել :

ՔԵՐ . ՎԱՐԺ . — Կամուրջ — կամրջի . Անոր . Այն .  
Նա . կիսամեռ :

ԳԻՏԵԼԻՔ . — Կամուրջ . Որմ : Քիւ . Պատ . Զուկ . Լուղակ .  
ԲԱՐՈՅ . Հնազանդութիւն .

17. ԶՈՒԹ

Զուրը շատ օգտակար հեղուկ է։  
Ծարաւ կ'անցնէ. կը մաքրէ, երկիրը  
կ'արդասաւորէ. կրակը կը մարէ. ա.  
զօրի կը դարձնէ։



Ծով եւ նաև

Զուրն այլ եւ այլ վիճակ կրնոյ  
ունենալ. կրայ լինիլ ամազ, անձրեւ.  
Ճիւն, կարկուտ, սառոցց, շոգի, ցող,  
ծով,

Զրերը երբոր հաւաքուին կը  
կազմեն աղբիւր, առու, գետ, լիճ,  
ծով, ովկեան։

Ծովու վրայ կան նաւակներ, նաւ-  
եր։

Երկրի չորս մասին երեք մասը  
ջուր է :



Կամուրջ

Գետին մէկ ափէն միւս ափը<sup>1</sup>  
կամուրջ մը կը տեսնեմ :

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Կրակ — Կրակուտ. Մով. — Մովու  
(Հոլովում) ի — ու — եան — ուան. Մովու. Նեղու-  
թեան. Զմերուան :

ԳԻՏԵԼԻՔ. — Զուրն ի՞նչպէս կարկուտ, շոգի կը  
լինի. Մովու վրայ կեցող և չկեցող մարդիններ .  
պատճառ :

Ա. Ռ. Ա. Շ

Օձը ծաղկէն թոյն կը չինէ, մեղուն մեղը .

Մաղկի պէս հոտով եղիր, մեղըի պէս համով .

Հաւն անգամ որ ջուր խմէ, վեր կը նայի :




## 17. ԵՐԿՈՒԻ ԱՅԾԵԲ

Գոռող մի այծիկ,  
 Ի կամուրջ պղտիկ,  
 Գտաւ դէմ առ դէմ  
 Նոր այծ խստադէմ:  
 « Շուտ քաշուէ գու ետ,  
 Խենդուկ, վատ, տգէտ: »  
 — Զեմ ես ետ քաշուիր.  
 Ապուշ դիմադիր:  
 Եւ շուտ եղջիւրներ  
 Կըսկսին վար վեր  
 Զարնել հրմչտկել:  
 Այսպէս երկուքն ալ,  
 Գլորին խսկոյն,  
 Կ'ըլլան դետամոյն:  
 Կան շատ խենդուկներ  
 Որ չեն վարուիր տարբեր  
 Քան այս այծուկներ.

## 18. ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Երբ Կուկաս առաջին տնդամ  
դպրոց գնաց սիրտը սաստիկ կը դար-  
նել :

Սանաւանդ երբ տեսաւ որ ոը-  
րահին մէջ շատ աշակերտներ կան ,



## Դպրոց

պատերուն վրայ աշխարհացոյցներ և  
պատկերներ կախուած կան , այնչափ  
չփոթեցաւ որ կարծեց թէ ամեն  
բան իր չորս կողմը կը դառնար :

Բայց տեսաւ աշակերտներուն մէջ  
մանկիկներ որ իրմէ փոքր էին և ե-  
ռանդով ուսմանց կ'աշխատէին . Այս  
տեսնելով սիրտ առաւ և մտքովը ը-  
սաւ . — Է՛հ , ես ալ կրնամաշխատիլ :

**Երբ գասը լմնցաւ ,**  
**վարժապետը գնաց ա-**  
**նոր մօտ և ըսաւ ժըս-**  
**տելով :**

— Ցղաս , թէ որ

այդպէս անդուլ աշխատիս , շատ լաւ  
բաներ պիտի սորմիս և ծնողացդ ու-  
րախութիւն և պատիւ պիտի բերես :

Փեր . ՎԱՐԺ . — Աշակերտ . Աշակերտառթիւն . Ա-  
շակերտաց . (Հոլովում) Աւսում . ուաման . Եկեղեցի-  
ցւոյ . Իտալիա - իոյ . Հայր - հօր և այլն :

ԳԻՏԵԼԻՔ . — Ի՞նչ է գոլոցը :

ԲԱՐՈՅԱԿԱՆ . — Աշխատառթիւն . բարի նախանձ :

#### Ա . ՓՈՔԲԻԿ ՄՐՁԻՒՆԸ

Տեսայ փոքրիկ մրջիւն մը , աս-  
դին անդին կը վազվզէր որ ուտելիք  
վինտուէ :

Ճամբուն վրայ գարի մը գտաւ .



ուզեց առնել տանիլ . բայց ի՞նչպէս .  
գարին մեծկակէր . ինքը փոքր ճշտկար :

  
Այն ատեն հնար մը  
տաւ : Քարի մը ցայ  
ելաւ և սկսաւ վերէն  
նայիլ , ինչպէս բարձր աշտարակէ մը :  
Ասդին կը նայի , անդին կը նայի ,  
և վերջապէս կը տեսնէ երկու ըն-  
կեր որ անկից կ'անցնէին : Դուտ մը  
անոնց մօտ կը վազէ . քիթն անոնց  
քթին կը քսէ ըսելու համար :

  
Եկէք , շուտ , ինձի հետ եկէք ,  
վարն աղւոր կրծոն կայ : Երեք մըր .

  
ջիւններն կը վազեն և  
գարին մէկտեղ կը տա-  
նին : Ինչ որ մէկը չէր  
կրնար ընել մինակը ,  
երեքը միասին շատ դիւրաւ կը կա-  
տարեն , և առօք փառօք կը տանին  
գարին որ իրենց համար շատ թեթև  
էր հիմա :

Տշոյ + ուս + ուեւ + ոյր + աշխատանէր հրդիւննէրէն :

ՔԵՐ . ՎԱՐԺ . — Ընկեր ( ալարզ անուն ) Դասընկեր  
( բարդ անուն ) : Անուան մի քանի ձեւերը բացատրել :  
ԳԻՏԵԼԻՔ . — Մրջիւն ( միջատներու վրայ կարճ  
տեղեկութիւն ) :

20. ՊԶՑԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Ճանճը ՃՃի (միջատ) մ'է : Մեղուն  
մեղրատու Ճանճ մ'է : Հաւատալի՞ է :  
Ակրուն, գոյնզգոյն թիթեռնիկներ,  
բը ժամանակ մը թրթուրներ էին :



Մամուկ և ոսայն

Կան թրթուրներ որ մետաքս կը  
մանեն : Ասոնք են շերամները :  
Ասրդն (մամուկ) ալ կը մանէ .  
բայց իր ոստայիլ գարան մ'է զօր կը  
լարէ Ճանճերուն : Անխոհեմ Ճանճե,  
բը շատ անգամ կը բռնուին :

ՔԵՐ. ՎԱՐԺ. — Սէր-սիրուն . Որ-որու-որմէ . ո-  
րով-որոնք և այլն :

ԳԻՏԵԼԻՔ. — Օգտակար միջատներ :

## ՀԱՆԵԼՈՒԿ

Զրի մէջ զիրար կը նային Երկու եղբայր,  
Բայց դարերով իրարու չեն մօտենար:

Կ'երթայ ու կ'երթայ հետքը չկայ,  
կը կտրէ ու կը կտրէ արիւն չկայ:

## 21. ԱԽ Է ԹԱՐԻ ԸԼԱԱ ՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ



Երկու քոյրեր կային,  
մէկին անունն էր Ֆուլիկ,  
միւսինն էր Երմոնիկ:  
Ֆուլիկ սիրուն աղջիկ մըն  
էր, այնպէսոր տեսնողը ա-  
նոր վրայ կ'զմայլէր և զանի կը գգուէր:

Իսկ Երմոնիկ աղւոր չէր, ուստի  
շատ ախուր էր: Երբ օր մը  
հայելիին նայեցաւ, շատ ա-  
ւելի տրտմեցաւ: Բայց քիչ  
մը մտածեց և ըստաւ:

— Ես գեղեցիկ չեմ, ինչ փոյթ.  
Կուզեմ բարի լլլալ, այնշափ բարի որ



ամէն մարդ սիրէ զիս , իմ տղեղու .  
թեանս չնայելով :

Եւ Երմոնիկ ամենուն հետ սիրով  
կը վարուէր , բարիք կընէր , այնպէս  
որ ամէն մարդ կը սիրէր զինք :

Իրաւ , իր բարութեամբը գէմ  
քըն աւ աւելի սիրուն եղաւ քան  
ամենէ աղւորին կերպարանը . վասն  
զի բարի սիրտ ու անուշ լեզու ու  
նեցողն կ'աղւորնայ :

ՔԵՐ . ՎԱՐԺ . — Աղու . Աղւոր . ( Ածանց մասնիկը )  
աւոր , ային , ական , աւէտ , եղէն , եայ , ոց , որդ ,  
ցի , ցու և այլն :

ԳԻՏԵԼԻՔ . — Հայելին ի՞նչպէս կը չինեն . Ուրիշ ա-  
պակեայ առարկայք :

ԲԱՐՈՅ . — Համեստութիւն :



## 22. ԹԻԹԵՄՆԻԿԻ ԵՒ ՄԵՂՈՒ

Թիթեռնիկն կ'ըսէր մեղուին ,  
 Թեւերը բաց եւ ցնծագին ,  
 — Թէ օդն լինի անուշ պայծառ ,  
 Շուտ շուտ տ'երթամ խաղալ անտառ :  
 « Զէ , չէ , կ'ըսէր , խելօք մեղուն ,  
 Զեմ սիրեր ես մնալ օրն ի բուն  
 Թոյլ ու անհոգ եւ երերուն :  
 Այլ փեթակիս գործը կայտառ  
 Տ'երթամ շինել սիրողաբար ,  
 Թէ օդն լինի անուշ , պայծառ : »



23. ԱՄԱՆՆԵՐ



Շիռ



Գաւաք



Տական

Մայրիկն ի՞նչ ամա-  
նի մէջ կը պահէ զուրը:  
Կոյժի մէջ : Ի՞նչ է այն  
ջրովլեցուն ամանն որ  
սեղանին վրայ դրուած  
է : — Շիշ :

Ի՞նչ կը գործածես  
զուր խմելու համար .—  
Ոտնաւոր կամ անոտն  
բաժակներ :

Ի՞նչ բանի մէջ կը  
պահեն գինին .— Տակա-  
նի մէջ , շիշի մէջ :

24. ԳՏՆՈՒԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Ուրախ զուարթ ցատկրտելով  
Գրիգոր կ'երթար տուն :



Իր ստքը յանկարծ բանի  
մը զարկաւ : Գրիգոր ծռե-  
լով նշմարեց արծաթ հինգ-  
նոց մը , որ նոր էր և փո-  
շին մէջ կը փալփլէր :

— Ի՞նչ ուրախութիւն , ըսաւ :  
Այս դրամով շաքար պիտի գնեմ ե-  
թէ մայրիկս հրաման տայ :

Բայց Գրիգոր քիչ մը մտածեց և  
ինքնիրեն ըսաւ :

— Բայց այս ստակը իմս չէ : Փիչ  
մառաջ տեսայ Աննիկն որ իր հիւանդ  
մօրը համար երկու դահեկանի կաթ  
առնելու կ'երթար : Անշուշտ այդ  
ստակն այն քաննջուցած պիտի լինի :

Եւ բարեսիրտ Գրիգոր վազեց  
գեպ ի Աննիկը : Խեղճ Աննիկ կուլար  
ինչու որ ստակը կորուսեր էր եւ  
մայրը շատ աղքատ էր .

Մի լար , պոռաց Գրիգոր : Ես  
գտայ ստակդ , ահա առ նայիմ :

Աննիկ թէ կուլար և թէ կը  
խնդար իր ստակը գտնելուն համար :  
Շատ շնորհակալ եղաւ Գրիգորին և

գրամն առնելով վաղեց որ իր մօրը  
կաթր զնէ :

Գրիգոր աւելի երջանիկ էր քան  
Անհիլը, ինչու որ շատ անուշը ան է-  
պարտք կատարելլ:

ՔԵՐ. ՎԱՐԺ. Ուրախ (ներհակն) Տրոտմ Նոր. Հին.  
Անուշ, Դառն. Ստակ (համանիշ) Դրամ. Աղքատ, Տնանկ:

ԳԻՏԵԼԻՔ. — Արծաթն ի՞նչ է (ձանօթ. մետաղ-  
ներու վրայ): Շաքարն ի՞նչպէս կը շինուի:

### ՀԱՆԵԼՈՒԿ

Ապա ասէք **ԲՆՀ**,  
Որ չպարտած իւր վրայ՝  
կառքն առաջ չի գնայ:

### 24. Կ Ա Խ Ի Ճ

Կաւիճը սպիտակ է. տեսակ մը  
իիր է. Քացախի մէջ կ'եփի, կ'եռայ.  
կարծը է ու շոր, շուառվկը փըրուի:

Աւել տախտակին վրայ կ ա ի ճով կը  
գրեմ վարժապետին լսած խօսքերը.

25. ԿՈՒԻ ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐՈՒ ՄԷջ

Եւ զինէ ու Վրխտափնէ աղւոր ունեն  
մը ունեին : Ա արդ աղօյն շրջապղեատ  
ուներ արդ պէտէին և երկու քոյր  
փափախակի կ'առնե ին զս յն իւ ենցիմեն  
ւերուն մէջ և պատրափ կը տանե ին :

Օր մը Վրխտափնէ ուղեց որ ինք մի-



այն առնե պէտէ կը Եւ  
զինէ զէմ կեցաւ և ա-

սոր վրայ կոխն սկսաւ :

Մէկը քուժով բռնեց  
սիրուն պէտէ կին զլիսէն , միւսը բա-  
չեց ոտքէն :



Խեղձ պէտէ կին ի՞նչ  
եզաւ , երկու կառը ե-  
զաւ . և երկու քուրիկ-  
ներն կահակի վրայ վար

լնկան : Մէկուն ձեռքը մնաց պէտէ-

## 20. ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Անտոնիկ ուներ փառաւոր թռուցիկ մը, կորուկ պոշով և երկայն առասանով :



Մարտ ամսուն՝ առաւօտ մ'ը՝ օդը  
շատ աղօր էր. թե թե հով  
մը ոկեր էր փշել. Անտոնիկին բակ բները իրեն  
կըսպաւ էին փաղոցը :

Անտոնիկ առաւ թռուցիկն, բայց  
ակսաւ որ թռուցիկն պոշն  
առասանին խառնուեր էր.  
ուղեց զատել, բայց չկրցաւ :

Անտոնիկ բարեամբաւ էր  
կը ջանայ քակել կապերն  
անհամբերութեամբ. իր պոռայ. իը  
իսկէց, սարը զետինը կը զայնել :



Վերջն ուժով կը քաշէ առասանն և  
սր սր լճուցիկը երկու կտոր կ'ըլլար  
— Վար էջիր, Անտանիկ, կը գո  
չեին իր ընկերները փաղոցէն։ Հովը  
կ ամաց կամաց կ'աւելիսոյ։

Բայց, ափանո, երբ Անտանիկ վար  
իջու, ձեռքը բանոծ էր շատ ոզոր,  
մելի գեմքով մը իր լճուցիկին բե  
կորները։

Ե զուր հովը փշեց նոյն օրն և միւս  
օրերը։ Անտանիկ մնաց տանը արտուժ  
տխուր, և մասձեց լճէ՝ բւժու բա և  
բ-բ-բ-բ-բ-բ-բ-:

Քոր ՎԱՐԺ. — Իր, իրենց (դէմք) իմ, Քու, Մեր,  
Զեր, իրենց ելն։

ԳԻՏԱԼԻՔ. — Մարտ (տարուան ամիսները)։ Ի՞նչ  
պէս կը չինուի թռուցիկը։

ԲԱՐՈՅ. — Համբերութիւն և քաղցրութիւն։



## ԻՄ ՄԱՆԿԻԿՍ

Իմ մանկիկս գեղեցիկ է  
Երբ որ կ'էլնէ օրրանէն։  
Չայն չի հաներ ու կը ձդ է  
Որ զինքը հագուեցընեն։

Իմ մանկիկս գեղեցիկ է  
Երբ որ աժռոտին վրայ  
Փափուկ ոտիւրը կը կայնի  
Եւ Աստուծոյ փառք կուտայ։

Իմ մանկիկս գեղեցիկ է  
Այս՝ և շատ գեղեցիկ։  
Եւ իր մայրը ինքդինքը  
Անով կ'ըղգայ երջանիկ։

— ՀՅԱՅ —

## 28. Ի Ն Ք Ն Ա Ս Է Ր

Զարեհ պատկերազարդ զիրք մըն.  
Պունած էր՝ իր, եւ պար.  
զեւ։ Իր Յովսէ փընկերը  
Խնդրեց որ այդ զիւքը  
տեսնէ։



Բայց Զարեհ զիրքը  
գոցեց ու զնաց ըսելով։  
— Ես զիրքս ուրիշի չեմ տար։

Քանի մ'օրէ վեց ջը՝ Յովսէփին  
կ'քահայրը զունաւոր զնդակ մը տը-  
ւաւ իւեն, գեղին, կապոյտ և կար.  
միր շերտեր ուներ :

Յովսէփ շատ ուրախ էր. իր ըն-  
կերները կանչեց և սկսաւ անսնց շետ



Խաղալ : Գնդակր ձեռքէ ձեռք կ'անց-  
նէր սատոստելով :

Զարեհ ալ վաղեց որ անսնց հետ  
խաղար. Այն ատեն Յովսէփի ըստ ա-  
նոր :

— Ես ալ կրնայի քեղի պէս պա-  
տասխանել. “Փոխ շեմ տարիմ զըն-

դակու : Բայց այս մերժումն քեզի  
վիշտ պիտի պատճառուեր , և ես չեմ  
ուղեր որ վշտանաս : Եկուր մեզի  
հետ խաղայ :

Մէ՛ լնիր եսոսեր . եսոսերն այն բան ինձն համար իշ դունէ  
և եւ ընկերները իշ դունէ :

ՔԵՐ . ՎԱՐԺ . — Բնդունած - Բնդուներ (անցեալ )  
Պէս իրրեւ - (նախաղրութիւն կամ յետաղրութիւն )  
Առանց . Վրայ . Հետ . և լն :

ԳԻՏԵԼԻՔ . — Գնդակ . Ի՞նչու համար թերեւ է :  
(Օդապարիկ ) :

ՔԱՐՈՅ . — Ի՞նչ է ինքնասիրութիւն : Ուրիշի բա-  
րիք ընելու զարտաւորութիւն :

---

## 29. ՆՍՏԱՐԱՆ

Այս նստարանն որու վրայ նստած  
էմ, մէկ քանի գործաւորներ շինած են:  
Փայտահատը կաղնին կտրած է ան-  
տառէն իր կացինովը :

Սլոցին փայտերը առած և ա-  
տաղձներ շինած :

Ասալձաղ ործք տաշած է այս ա  
տաղձն իր քերիչով :

**Ներկարաբն անոր դոյն տուած է :**

ԳԵՐ. ՎԱՐԺ. — Նոտարանն նիստ. Վարժ արան.  
Աղոցիչ. Քարտզ - իշ. ող - չէն - գործ - բար :

ՔԻՑ. ԼԻՔ. — Կացին. Ի՞նչ դործի է. Ուրիշ ի՞նչ  
գործիներ ունի ատալձաղ ործը. Հի՞ւսն :

### 30. ՀԱԿԱՌԱԿԱՍԵՐԸ

Բարկեն շատ կ'ախորժեր ուրիշն  
դպչիլու կռուիլ. Առաւ  
ևօտ մ'իթ գասարանին  
մէջ՝ երբ իր Օճնիկ գա-  
սընկերը երես մը զիր կը  
զրեր ու շաղիր, անոր  
թեւր հրեց յանկարծ և մելանը կա-  
թիլ մ'ընկաւ զեղաղրութեան տետ-



րակին վրայ :

Օճիկբարի սիրտ ուներ  
ձայն շնանեց. Վարժապէ,  
աին շգնաց զանդատ չը-  
րաւ, որպէս զի իր դասըն-  
կերը շը պատճուի, այլ

Նորէն սկառաւ նոր երես մը դրել :

Երբ դպրոցին աղաստ եղան , Բարկէնքաղքին հրապարակը զնաց և տեսաւ որ Օննիկ մէկ բանի լնկի լներով զնդիկի խաղ կը խաղար : Զարաձճի տղան ոտքի հարուած մը տալով բոլոր զնդիկները ցիր ու ցան ըրաւ և խնդալով կծիկը դրաւ :

**Այսպէս կէս ժամու մէջ երկու շա-**



րութիւն բրաւ Բարկէն և կը կարծէր թէ ըրածը մէծ յանդ զնութիւն է :

Նոյն միջացին Բարկէն տեսաւ մասվաճառի մը խոչըր շունն որ ոլորուած կը քնանար հանդիսա՝ արենին մէջ . կամաց կամադ մօտեցաւ շան , և անոր սլոշէն քաշելէն ետեւ նետի պէս փախաւ :

Բայց բիշ մը հեռացիր էր Բարկէն երբ զզաց սուր ակռաներ որ ոը բունքին միախն մէջ կը մտնէին :

Բարկէն սկսաւ բոլոր ուժովը պոռաւ և շարժիլ , բայց որչափ շարժէր



այնչափ շան ակռաներն իր միսին մէջ  
կը մտնէին :



Ովլուց ամենէ առաջ  
Բարկենին վայնասունը.  
Նոյն ինքն Օննիկ լուց :  
Արփարար վաղեցան վը-  
րայ և վասնդն աշքն  
առնելով յաջողեցաւ շունը վոնտել :

Ապա տունը տարաւ Բարկենը՝ որ  
կը կազմոր : Այսպէս Բարկեն զգալի  
դաս մը առած էր իր շարութեանը  
համար, և իր դասընկերէն ներում  
կը խնդրէր :

Այն ժամանակէն՝ այդ երկու տը-  
դայք լաւ բարեկամ եղան. Բարկենա-  
ւելի հանդարտ և զգոլչ վարմունք ու-  
նէր և չէր իյնար ոչ ընկերներուն եւ  
ոչ կենդանիներուն հետ :

Քոր. Վ'յրժ. — Արի. Արփարար (ժակրայ շինող  
մասնիկը) Բար, պէս, օրէն, ովին, զին, ակի, ելն :

ԳԻՏԵԼԻՔ. — Մելան. ինչպէս կը շինուի. Նետ.  
Աշեղ :

ԲԱՐՈՅ. — Բարեսրտութիւն :

## 31. Մ Ե Լ Ա Ն

**ՄԵԼԱՆԸ Հատ պիտանի է . զ ոյնը սռ  
վարարար մեւ , վաղուն է և զիմահար  
հերուկ . Կայ նաև կարմիր , կապցյա  
մելան :**

**ՄԵւ մելան շինելու համար պետք  
է զիստր (մաղլ) , երկաթի ծծմբատ  
կամ կանաչ արջասպ և խէժ : Գիսու-  
րը կաղնիի վրայ կ'աճի . երբ երկաթի  
կը լուծուի ծծմբային թթուի մէջ ,  
կը կաշուի երկաթի ծծմբատ :**

**Հին ժամանակ մելանը կը շինեին  
ածուխով . ինչպէս կ'ընեն մինչեւ հի-  
մակ . Հեղ կաստանի մելան :**



## 32. ՄԿՆԻԿ ՈՒ ԿՐԻԱՅ

Մկնիկ մը՝ թեթեւ, յիմար,  
 Երբ դէս ու դէն կը գտոնար,  
 Հանդիսի վրայ ճամբաւն  
 Կրիայի մը հեք, նկուն։  
 — Ա՞հ, կըսէ այդ քո տուն,  
 Տխուր զնդան։  
 Կ'անիծես գու բնութիւն  
 Որ քեզ տուտու այդպէս տուն։  
 Տես իմ տուն է ապարան,  
 Մեծ, շրեզ իմ բնակարան։  
 Լորենի մկան լայնժամ  
 Տայ կրիայն այս պատասխան։  
 — Եատ գոհ եմ ես իմ տունէս,  
 Զի ակրն եմ ես։

## 33. Մ Ո Ւ Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Կառարինէ սցրի բարի կին մ'եր։  
 Ու ներ որդի մ'որ տրիշ քաղաք մը կը  
 զանուեր, բայց ամեն ամիս իր մօրը  
 սառակ կը խեկեր որ սպիի։

Օք մը նամակ մ'առաւ կատոս բինե  
և կանչեց Յովսէփին, որ իր  
դրացիին որդին էր, և ա.  
նոր ըստաւ.



— Տղաս, ինդրեմ սա  
նամակիլ կարդա՞ , պառաւ  
եմ, աչքերս լու չեն տեսներ :

Յովսէփի կարմի եցաւ ու կմկմաց .

— Տիկին ես կարդալ չգիտեմ :

— Բայց շատ ատեն կայ որ զըպ.  
րոց կ'երթաս :

Ծոյլ Յովսէփը դլուխը ծռեց և ք.  
փոխած մնաց :

— Ուրեմն, ուրիշ տղայ մը կ'ուզեմ  
ըստ պատաւ կ'նրա Գիտեմ որ Պօղոսն,  
որ քու դատենկել դ է կրնաց կարդալ



— Երթամ կանչեմ, ը.  
սաւ Յովսէփի. որ մենք  
ծոյլ էր, լու սիրտ ուներ:  
Պօղոս եկաւ և որոշ ու  
յատակ ձայնով կարդաց

նամակիլ : Յովսէփ շատ ամօթով մնաց  
և ի՞քն իրեն ըստաւ, և ու չու կուռալ:

Երկու ամիս ետք , Յովսէ փ այնքան  
աշխատակցաւ որ ոչ միայն սկսաւ շուտեւ  
լու կարգալ , այլև զրելու հաշուել :

ՔԱՅ. ՎԱՐԺ. — Բարի-բարեսէր (ուրիշ բարդու-  
թիւնք) Գոյական . Բարու թիւն . ելն . Յովսէ փ , յա-  
տուկ անուն . Հասարակն . Հաւաքականն ինչ է : (Կըրկ .  
նու թիւն քերակ անական բացառքու թեանց ) :

ԳԻՏԵԼԻՔ . — Նամակ . Օրագիր . Հանդէս ելն :

ԲԱՐՈՅ. — Աշխատասիրու թիւն :



#### • 34. ՈՒՐՈՒԱԿԱՆ

Ես սրտոտ եմ . կ'ըսէր Կարապետ,  
իր մօրը բանէ մը չեմ վախնար և զիշե .  
ըլ մու թին ամէն աեղ կրնամ պարտիլ :

Բայց Կարապետ մեծաբան եր և  
պարծենելու : Գիշեր մը քնոցած ա-  
մենը յանեկարծ որքնեցաւ . կարծեց թէ  
իր աշքին կ'երեւի պատուհանին մեջ

Ճերմակ էին մը կլոր ու փայլուն  
դիմով :



Կարսապետ թէղապտ  
տառ եզռւ, զյուիր մեր,  
մակին տակը ծածկեց և  
պուռաց :

— Մայրիկ, մայրիկ, հասի՞ր :

Խեղճ մայրն սրտավճռունգ վաղեց  
անոր մօտ :

— Մայրիկ բառ Կարսապետ խեղ  
դուկ ձայնով մը, ուր-  
ուական մը (վերի) կայ  
սենեկիս մէջ, տեսայ,  
այդ վերին :

Մայրիկն ոկտառ քահ  
քահ խնդալ և բառ . — Ե՞՞ն, հապա  
գու կըսէիր որ սրտոտ ես, ո՞ւր է-  
անվախութիւնգ, մե՛զք քեզի, շոքեդ  
անդամ կը վախնաս : Հանե նայիմ զը-  
րուխդ գուրա, վախկատ ազար : Ալի՞ր, ե-  
կուր երթանք սառ երներուն զէմ  
կոռուիք :

Կարսապետ կամացուկ մը զըսիր  
զուրս հանեց, և ի՞նչ աեսնէ աղեկ :

ՓԵՐԻ կարծածը վարագոյքն էր ,  
որու վրայ լուսինն իր լշյուր զարկած  
էր . իսկ ձերմակ փայլուն զլուխն  
ալ լուսնակն էր՝ որ վարագուրին ե-  
տեւէն կ'երեւէր :

— Մայրիկ, ըստ կարապետ , համ-  
բուրելով զի՞նք , ուրիշ անդամ մեծ  
մեծ ողիտի չջարդեմ թէ անվախ եմ :

ՔԵՐ . ՎԱՐԺ . — (ԿԵԼՈՒԹԻՒՆ )

ԳԻՏԵԼԻՔ . — Լուսինն ի՞նչ է , Արեւն :

ԲԱՐՈՅ . — Աւելորդապաշտութիւն . վնասները :

### — ՀՅՈՒՅՑ —

35 · Թ Ռ Ի Ղ Թ

Թուղթը օդտակար է . ի՞նչպէս  
կը շինուի : Տե՛ս սա հնահաւաքը որ  
գետնէն ամէն գոյն  
հին քրջեր կը ժողվէ :  
Այս քրջերն կ'առնէ  
թղթագործը եւ կը  
նետէ գլանի մը մէջ ,  


որ ունի սուր սլաքներ : Գլանը արագ  
կը դառնայ , կը պատռէ քրջերն և

տեսակ մը զանգուած կ'ընէ, Ա. ՐԴ  
զանգուածը բոլորովին ճերմակ է,  
ինչու որ մէջը կիր դրին :

Ապա թղթագործը կ'առնէ զանգ-  
ուածը գործիքով մը և բարակ թեր-  
թեր կ'ընէ, բոլորը մամուլի տակ կը  
ձնշէ և անոնց վրայ տեսակ մը խէժ  
կը սփռէ որ թուղթը չպտղի երբոր  
վրան դիր դրուի :

Քսանը չորս թերթը մէկ չամ-  
պահու է . քսան տրցակը մէկ պահու է :

Թղթով կը շինեն օրագիր, գիրք,  
պատկեր և այլն. Եթէ թուղթ չը-  
լար, մենք ալ հին ատենուան պէս  
պիտի գիր գրէինք կեղեւի, կաշիի  
և բարի վրայ :



## 36. ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ


Տասնամեայ մի տղեկ՝ կեցած ափը գետին,  
Խաղար կլորիկ քարեր նետելով ի ջրին.  
Կը մոռնար վարժատուն, դիտելով ոսառւմներ,  
Որ գետին երեսը կ'ընէին այդ քարեր։  
Մանկիկ մը սիրուն նոյնը ընել կը փորձէ,  
Բայց ոտքը կը սահի, հոսանկքն է կը տանի։  
Խորունկ էր գետակն, մահն անխուսելի։  
Ա՛խ, պիտի խղդուի մանկիկն՝թէ միւսը չհասնի։  
Գետ կը նետուի տղեկն մահն աշքը առած,  
Երեք անդամկը սուզի եւ խոր շունչը սպառած,  
Կը բռնէ մանկիկն, կ'աղատէ մահուանէ։  
Բայց վրայ քարափին գրոհն ուրախութենէ,  
Մափ կը զարնէ ուժդին, անունդ ի՞նչ է կը գոչէ։  
« Անունս, ի՞նչ փոյթ ձեզ, միթէ հօ՞րս տի ըսէք,  
Որ խմանայ թէ ես թափառ գայի յեղերք,  
Որ ծեծէ զիս սաստիկ. ո՛չ, ո՛չ, ըսաւ տղեկն,  
Եւ գլուխն առած՝ շուտ մը գրաւ կծիկն։



# ՄԱՍՆ Գ.

1. ԵՐԿԻՐԸ

Չորս տղայք սեղանի մը բոլորտիքը կեցած են :  
Սեղանին վրայ կայ եւ առաջ մը : Իրենց բարի  
հայրը կը բացատրէ զաւակներուն թէ Բ'նչ է եւ իւր:



Երկիրը անշարժ չէ : Երկու շարժում ունի : Կը  
շարժի շարունակ իր վրայ քսան եւ չորս ժամու  
մէջ՝ որովհ գիշեր ու ցերեկ կըլլայ . նոյնպէս կը

թաւալի արեւին բոլորտիքը գրեթէ 395 օրուան  
մէջ, և տարուան եղանակները կուդան իրարու ե-  
տեւէ :

Երկիրը սեղանի պէս տափակ չէ, այլ կլոր գըն-  
դակի պէս : Անոր բոլորտիքը նաւով կը ճամբոր-  
դեն մարդիկ :

Նատ շուտ կը շարժի երկիրն : Շոդեշարժ կառքէ  
մը հարիւր անգամ աւելի շուտ, թէպէտ մեզի  
այնպէս կ'երեւի թէ արեւը կը շարժի : Պատճառը  
հարցուր վարժապետին :

Դաստիան իւրաքանչիւր դասի վրայ հարցումներ  
ընելով աշակերտաց, պարտի շարունակել Քերակա-  
նական և Երաբանական հրահանգները :

### 2. ԽՈՉՊՈՅԱՄ ԵՐ ԱՍԺՆԵՆ ԺԱԿԱՆԱԿԱՐ

Զորս եղանակ կայ . Գորոն, Այսու, Աշոն, Զառ :

Գարունը կ'սկսի Մարտ 8ին և կը լմնայ Յու-  
նիս 8ին : Մաղիկներու եղանակն է այս :


Ամառը կ'սկսի Յունիս 9ին և կը լրանայ Սեպ-  
տեմբեր 10ին : Հունձքի ժամանակ է այս :

Աշունը կ'սկսի Սեպտեմբեր 11ին և կը լրանայ  
Դեկտեմբեր 9ին : Պտղաքաղի և այգեկութի ժա-  
մանակ է այս :

Զմեռը կ'սկսի Սեպտեմբեր 10ին և կը լրա-  
նայ Մարտ 7ին : Անձրեւի, ձիւնի եղանակն է այս :

Ամէն մէկ եղանակ երեք ամիս ունի: ինչպէ՞ս:  
Ամէն մէկ ամիս 31 կամ 30 օր կը տեսէ: Մի-  
նակ ֆետրուար ամիսը 28 օր է: Չորս տարին մի  
անգամ 29 օր է. Նույն տարի:

Տարին 12 ամիս է. ամիսը 4 շաբաթ + շաբաթը  
7 օր: Օրերը կը լամացնուին ժամերու, վայրին:



Ժամացոյցին արտաքին երեսը



Ժամացոյցին ներքին մասերը

Մէկ օրը 24 ժամ է. ժամը 60 վայրկեան: Ժա-  
մացոյցէն կ'իմանանք օրուան ժամերը.

### ՀՅԱԼ

#### 3. Ա. Բ Ա Կ

Արեւը հրաձնութ մ'է. ինքնին կը վառի և կը  
լուսաւորէ աշխարհը: Լուսաւորէ իր լոյսը կ'առնէ ա-  
րեւէն և մեզի կը դրկէ, մենք որ երկրի վրայ  
ենք: Լուսինն երկրին ունաւուն է:

Երկնից բոլոր հաստատուն մարմիններն արե-  
ներ են, որոնցմէ շատերն արեգակէն աւելի մեծ  
են, բայց մեզի պղտիկ կ'երեւէն, ինչու որ շատ  
հեռու են:

## 4. ՆՐԿԸ ՏԵՍՔԸ

Երկրին երեսը կան ծովեր, լեռներ, բլուրներ, ժայռեր, գաշտեր, գետեր, լիճեր։ Կան նաև հովիտներ, անտառներ, ձորեր։ Եթէ մենք լուսնակին մէջ գտնուէինք, երկիրը մեզի պիտի երեւէր գնդակի մը պէս, մուժ և փայլուն բիծերով։ Այդ փայլուն մասերն են ծովերը։

Բայց եթէ երկրին խորը մտնենք, պիտի գըտնենք այլ և այլ հողային նիւթեր, որոնցմէ կը շինուին շաղախ, աղիւս, աղակի և լն։

Կան նաև մետաղներ, ինչպէս երկաթ, արծաթ, ոսկի, պղինձ, կապար, քարածուխ, աղուճակ։

## 5. Ռ Ա Վ.



Երկրիո երրորդ մասը, ինչպէս ըսինք, ծով է։ Դառն ու աղի է ծովու ջուրը։ Մեծ ծովերը կ'ըսուին Ունիանս։ Կամ Ունիան։

Գետերն ու գետակները կը թափին ծովը :



### ԾՈՎԵՑԵՐՔ

Յամաքի ծայրերն որ ծովու վրայ կը նային, կը ուին եւլը+ կամ ա՞սո՞ւ+ :

Նատ տեղեր ծովէն մաս մը կը մտնէ դէպ ի



### ԱՊՊԻ

ցամաք և կը շինէ իւրչեր, ձոչեր, հրանուռներ, աւ-  
շացներ, եւայլն :

Ովկէանին խորը կը գտնուին լեռներ, բլուր-  
ներ, որոց գագաթները կը հասնին ծովուն երե-

որ և կը յօրինեն իշխներ, իսուներ, առաջակացներ : Նոյն-  
պէս ծովուն խորը կան հրբանեներ, այսինքն կը ակ  
ու բոց հանող լեռներ :

### Յ. ՆՈՎՈՅ ՌԵՎՐ

Ծովերու վրայ նաւերը. կ'երթեւեկեն, ինչպէս  
և նաւակներ, շինուաներ : Հեռաւոր երկիրներէ



Շոգենաւ

կը ճամբորդեն նաւերով, և շատ անգամ մարդիկ  
ապրանքներ կը տանին այն երկիրներն ուր՝ պէտք  
ունին :

Նաւերը կը մտնեն Հոռոհանդիւրը և վաճառականներն անոնց բերած ապրանքները կը հանեն և կը ծախսեն :



Նաւահանգիստ

Նաւահանգիստներու բերանը կը դանուին գույներ, այսինքն՝ բարձր աշտարակներ որոց դա-



Փարոս

գաթը կը վառի մեծ լույսեր մը և հեռուն կը լուսաւորէ գիշերն որ նաւերը ցամաքին չզարնեն :

Մովլ երկրին պէս ունի իր բերքերը։ Մարդիկ  
ոչ միայն ձուկ և խեցիներ կ'որսան ծովէն, այլ և



Կետ ձկան որսորդութիւն

բառապ, ճարդութոյ, կը հանեն, որով գոհարներ կը  
շինեն։ Կը հանեն նաեւ ողունք։ որ տեսակ մը  
կենդանի է . Վեւեւ, որու ճարագէն եղ կը շինեն վա-



Բուստ, Սպունգ, Խեցի

ռելու համար։ Կէտին բերնէն կը հանեն վերաբեր ծովական է որ մեզի կուտայ նաև ու, որ այնչափ կարեւոր է կերակուրներու համար։

## 7. ՏՈՒՆԿԵՐ

Շատ հին անտառներ կը գտնուին երկրի վը-  
րայ։ Փայտահարը կը կարէ ծառեր։ Փայտով կը-  
րակ կը վառենք, ածուխ կը շինենք։ Փայտը շատ



Ցորեն.



Գարի.



Ագիպտացորեն.

բաներու համար կը գործածուի, ինչու որ դի-  
մացկուն և հաստատ նիւթ է։

Փայտով կը շինեն մարդիկ տուներ, կարա-  
սիներ, նաւեր։

Զանազան տունկեր կան . ձնդուռու , թելուր , քունառ , էսդային , բուժոյին , խնահոռ . Մարդու սնունդ տուող տունկերն են , ցորենը , գարին , բրինձը , բակլան , ոլոռն , գետնախնձորն ելն .



Բամբակ

Թելուր տունկերն են վուշ , կանեփ , բամբակ , որով այլ և այլ կտաներ կը շինեն մարդիկ մանելով և հիւսելով :



Գետնախնձոր . Քրքում . Խաչիսաշ . Շիկատոկ . Ատեպին

Գունդուռ տունկերն են անոնք որոց արմատէն , կեղեւէն , ծաղիկէն կամ պտուղէն ներկ կը հանեն , ինչպէս տարօն , արեւածաղիկ , քրքում ելն .

Խ-Դային կ'ըսուին այն տունկերն որ մեզի կուտան  
իւղեր . ինչպէս են ձիթապտուղը , խաշխաշը , և լն :  
Բայց են այն բոյսերն որ շատ հիւանդու-  
թիւններու համար իբրեւ գեղ կը գործածուին ,  
ինչպէս մոլոշ , մեկոն , երփցուկ , և լն :

Խնկունոյ կ'ըսուին այն բոյսերն որ անուշ հոտ  
ունին և մասնաւորապէս տաք երկիրները կը բուս-



Մանուշակ , Վարդ , Կոկաչ



Կրիախոտ

Նին , ինչպէս են համեմք , կինամոն , պղպեղ , մե-  
խակ . ծաղկատունկեր , ինչպէս վարդենի , մա-  
նուշակ , անանուխ , և լն :

Ի վերջէ՝ կը գտնուին նմանապէս նոռանչէ տուն-  
կեր որ թոյն ունին , ինչպէս են , մոլեխինդ , ա-  
կոնիտոն , և լն :

## 3. Ծ. Ա. Դ. Ի. Կ.

Ի՞նչ հրաշալի բոյսեր են նաեւ ծաղիկները , որ գարնան կը ծաղկին գոյնզգոյն և անուշ բուրումներ ունին :

Պարտէզներու մէջ կը մշակուին վարդը , շահ-պրակը , շահոքրամն , յակինթը , մանուշակը , յասմիկն :



Հաղործ



Սալոր



Մորենի



Կաղին



Տանձ



Խնձոր



Կեռաս



Ելող

Մարդերու մէջ կը բուօնին Զատկի ծաղիկը , շուշանն , առույտը ևլն :

Խոկ դաշտերու մէջ կ'երեւին վայրի կակաչը , այծի տերեւը , ծծմորը , հարսնուկը , ևլն :

Անմեղ մանկիկները կը սիրեն ծաղիկները :

Ծաղիկներէն ետքը կուգան պտուղները : Տեսակ տեսակ պտուղներ կան : Կոտոր , Բնաւոր , հա-  
րաւոր , վեճիւուր :

Կոտոր կ'ըսուին այն պտուղներն որ մսոտ ու ջրոտ են , բայց մէջն ունին խոշոր հոսք մը , ինչպէս  
են՝ դեղձը , ծիրանը , սալորը , կեռասը :



Թռութեալ պատուղներն ալ ջրոտ են և մսուտ, բայց ներքին կողմն ունին չէ թէ խոշոր կուտ, այլ հատիկներ կամ նիւեր, որ ողորկ պատեանի մը մէջ ամփոփուած են: Խնչպէս են, խնձորը, տանձը, զղեարը, և լն:

Հայութ կ'ըսուին այն պատուղներն որ կակուդ ու կլոր են և ունին շատ մանր հատիկներ, ինչպէս են խաղողը, հաղարջն, ելակն, և լն:

Փէտէսութ պատուղներն ալ են նուշը, ընկոյզը, կաղինը, շագանակը, և լն. ինչու որ կարծր կեղե մ'ունին. իսկ միջուկը կը գտնուի բարակ մաշկեայ պարկի մը մէջ, պատուղը կը չորնայ և ձմրան համար կրնայ երկար ժամանակ պահուիլ:

Ամէն պաղատու ծառերն որ Եւրոպա կը մշակուին ուրիշ երկիրներէ բերուած են: Պարսկաստանէն՝ դեղձը, Թուրքիայէն՝ ծիրանին, կեռասը, Սիրիայէն՝ սալորը, Ասիայէն՝ թզենին, ընկուղենին, Կրէտէէն՝ սերկեւիլն, և լն:



### ԱՌ ԱՇԱԿԵՐՏՈՒ

Ահա սիրելի տղայքս, հասանք Փուրէի ընթեցւուն վերջը. Այս ընթերցանութենէ շատ օգուտ քաղած էք, եթէ ուշի ուշով կարդացած և հասկցած էք ձեր կարդացածները:

Հիմակ կրթութիւն մը կամքննութիւն պիտի ընէ վարժապետը, ձեզի այլ և այլ հարցումներ պիտի ուղղէ, և եթէ լաւ պատասխաններ տաք, այն ժամանակ դասարան պիտի փոխէք եւ Եւրոպ ընթեցւուն պիտի սկսիք:





